ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ Արմավիրի մարզի Ամբերդի համայնքապետարանը (այսուհետ համայնքապետարան) հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-2) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

05.08.2021

Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ
Հայտատու՝ Ամբերդի համայնքապետարան, համայնքի ղեկավար՝ Գևորգ Ղամբարյան
Համայնքային ծառայության մասին օրենքի 14–րդ հոդված

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Ամբերդի համայնքապետարանը (այսուհետ համայնքապետարան) հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-2) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ ծածկագիր 3.1-2) Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ օրենքով սահմանված կարգով իրականացնում է անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագրումը /գանձումը/, ինչպես նաև տեղական տուրքերի և վճարների, համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումը։
Թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝
• Միջնակարգ կրթություն,
• Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Գանձապետական համակարգի մասին>>, <<Գույքահարկի մասին>>, <<Դրամարկղային գործառնությունների մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
• Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2021 թվականի սեպտեմբերի 8-ին ժամը 12.00-ին Արմավիրի մարզի Ամբերդի

համայնքապետարանի շենքում:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները համայնքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
• Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս) դիպլոմի, աշխատանքային գրքույկի պատճենները բնօրինակի հետ մասին.
• Արական սեռի անձինք զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճեն բնօրինակի հետ մյասին.
• Մեկ լուսանկար 3*4 չափի.
• Անձնագրի պատճե.
• Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,
• Հհայտարարություն այն մասին, որը ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 9.00-18.00, բացի շաբաթ և կիրակի օրերից Ամբերդի համայնքապետարանում հեռ. 094-36-77-37, 093-31-84-61 կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանում Աբովյան փողով 71, հեռ. 2-76-49 կամ 2-07-70:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագիր և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Ամբերդի համայնքապետարանի աշխատակազմ:
Դիմումների ընդունման վերջին ժամկետը 2021 թվականի օգոստոսի 25-ը ժամը 18:00–ն: